



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՅԱՆՔԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## Ս. ԾՆՆԴԵԱՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ԸՆԹՐԻՔԻՆ ԱՌԻԹՈՎ

### **ՀԱՄԱՏՔԻ, ՅՈՅՍԻ ԵՒ ՍԻՐՈՅ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ԹՈՂ ՍԱՐՄՆԱԴՈՐՈՒԻՆ ՈՒ ԱՐԺԵՒՈՐԵՆ ՄԵՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒ ՀԱՄԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՐԸ**

#### *ՄԱՂԹԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ*

Հայրենի պետության, մեր Թեմի կուսակցական, միութենական ու ժողովականության ներկայացուցիչները, Ազգային Առաջնորդարանի բարերարներն ու բարեկամները Հինգշաբթի, 6 Յունուարի երեկոյան, Սոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի «Բաղրամեան» սրահին մեջ անգամ մը եւս ժամադրուած էին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, հոգեւորականաց դասուն ու Ազգ. Առաջնորդարանի ընտանիքին հետ, միասնաբար տօնելու Ս. Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը, բարեմաղթութիւններով բանալու 2011 տարին ու ճամբայ ելլելու նոր նուաճումներու կամքով:

Առաջնորդ Սրբազանին Ս. Ծննդեան աւանդական ընթրիքի հրաւերին ընդառաջած էին Հայաստանի գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեան, հիւպատոս Մեսրոպ Շապոյեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Վահէ Եագուպեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Տոքթ. Վիգէն Յովսէփեան, Կեդր. Կոմիտէի անդամ Տիար Աւետիք Իզմիրլեան եւ անդամներ, Ազգային Վարչութեան, Հ.Ս.Ը.Ս.ի, ՀՕՄի եւ Համագգայինի կեդրոնական ու շրջանային վարչութեանց անդամներ, Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ Փօլ Գրիգորեան, ազգային երեսփոխաններ, ծխական շրջաններու հոգաբարձութեանց անդամներ, Ազգ. Վարժարաններու հնամակալ Մարմինի անդամներ, Տնօրէններ եւ Մանկամստներու վարիչներ, Ազգ. Առաջնորդարանի բարերարներ ու բարեկամներ, մամլոյ ներկայացուցիչներ, ընդամենը աւելի քան 650 ազգայիններ:

Ընթրիքին հիւրընկալն էր Թեմիս բարերարներէն Տէր եւ Տիկին Օսկօ եւ Երան Կիրակոսեան ամուլը, իսկ հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան:

## ՃԱՐԱԿԱՆՆԵՐ ՈՒ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԵՐ

Խորհրդաւոր էր պահը, «սուրբ ու լուռ էր գիշերը», սրահին լոյսերը մարած ու ներկաները վառած մոմեր ունէին իրենց ձեռքին: Առաջնորդ Սրբազանն ու հոգեւորականաց դասու անդաները սրահ մուտք գործեցին պատմահայր Մովսէս Խորենացիի յօրինած «Խորհուրդ մեծ» Ս. Ծննդեան շարականը երգելով եւ ներկաներուն փոխանցելով Քրիստոսի Ս. Ծննդեան աւետիսը: Արդարեւ, աւետիս էր այդ օր, որովհետեւ Տէրը ծնաւ մարդոց փրկութեան համար. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Ձեզի-մեզի մե՛ծ աւետիս»: Ներկաներու դէմքին վրայ Ս. Ծննդեան ուրախութիւնը կը ճառագայթէր:

Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան ընթերցեց Յիսուսի Ս. Ծննդեան մասին աւետարանական հատուածը: Ապա կատարուեցաւ Թաթախի արարողութիւնը: Սեղաններուն շուրջ գտնուող երեք անդամը ինք նշխարը առնելով բաժնեց ներկաներուն, որոնք գինիի բաժակներուն մէջ թաթխելով ճաշակելով՝ իրարու բարեմաղթութիւններ կատարեցին: Առաջնորդ Սրբազանը կատարեց օրհնութիւնը սեղաններու եւ ներկաներուն տրուելիք՝ Աստուածամօր եւ Յիսուս Մանուկի պատկերներով յուշանուէրներուն, որոնք սիրայօժար տրամադրուած էին Տիար Յարութիւն Չափարեան բարերար ընտանիքին կողմէ:

Ողջոյին առաջին խօսքը արտասանեց Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի փոխ ատենապետուհի Տիկին Ծովիկ Չէյթլեան: Ան ընթրիքի կազմակերպիչ մարմինի անդամներուն անունով ողջունեց ներկաները, անդրադարձաւ գեղեցիկ աւանդութիւն դարձած այս երեկոյին խորհուրդին, վեր առնելով այն իրողութիւնը, որ Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2011 տարին հռչակած է «Հայ Մանուկի Տարի», մաղթելով, որ Յիսուս Մանուկի յատկանիշները մարմնաւորուին մեր մանուկներուն ու մանկութենէ անցած բոլոր հայորդիներու հոգիներուն մէջ:

Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պօղոսեան ողջունեց ներկաները, յատկապէս Ազգ. Առաջնորդարանի բարերարներն ու գործակիցները, որոնք ամէն տարի այս ուրախ առիթով կը խմբուին Առաջնորդ Սրբազանին շուրջ, պահպանելով գեղեցիկ աւանդութիւն մը ու գործնապէս ցոյց տալով, թէ զօրակից են Ազգ. Առաջնորդարանի առաքելութեան եւ մասնակից՝ անոր ծրագիրներուն իրականացման: Տիկին Պօղոսեան եւս անդրադարձաւ «Հայ Մանուկի Տարուան» առիթով Վեհափառ Հայրապետի թելադրանքին ու ընդգծեց, որ այս պատգամին պէտք է ընդամառել ամենայն սրտով, որովհետեւ մանուկները մեր ապագան են, մեր եկեղեցւոյ, ազգի ու հայրենիքի գոյատեւման գրաւականը, մեր կեանքի բոլոր մարգերուն մէջ գործելու կոչուած վաղուան ծառայողը:

Սրտի խօսք արտասանելու հրաւիրուեցաւ Հայաստանի գլխաւոր հիւպատոսը: Տիար Գ. Յովհաննիսեան գոհունակութիւն արտայայտեց սոյն երեկոյին մասնակցութեան համար, նշելով, որ Ս. Ծնունդը ընդհանրապէս կը տօնուի ընտանեկան շրջանակի մէջ: Ան ողջունեց ներկաները, որոնց շարքին ան կը տեսներ գործակիցներ ու ծանօթ-բարեկամներ, ու մաղթեց, որ յառաջիկայ տարին ըլլայ նոր ծրագիրներու եւ իրագործումներու շրջան

մը, մանաւանդ այն մօտեցումով, որ Հայաստան պիտի տօնի իր անկախութեան 20րդ տարեդարձը:

## **ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ**

Պաստառի վրայ ցուցադրուեցաւ Վեհափառ Հայրապետին ողջոյնի, բարեմադութեանց ու օրհնութեան խօսքը: Վեհափառ Հայրապետը գնահատանքով արտայայտուեցաւ Առաջնորդ Սրբազանին, ժողովականութեան ու անոնց շուրջ համախմբուած ազգայիններու տարած աշխատանքին ու նուիրումին մասին, մաղթելով, որ յառաջիկայ շրջանին, այս բոլորը բազմապատկուին, ի խնդիր եկեղեցւոյ ու ազգի պայծառացման: Նորին Ս. Օծութիւնը յիշեցուց, որ վերջին տարիներէն իւրաքանչիւրը ձօնուած էր ազգային ու մարդկային արժէքի մը. 2010 տարին նուիրուած էր Հայ Կնոջ, վեր առնուեցան անոր դերն ու առաքելութիւնը՝ մեր ընտանեկան ու ազգային յարկերուն տակ, իսկ յառաջիկայ տարին կը նուիրուի Հայ Մանուկին, այն հաւատքով ու յանձնառութեամբ, որ մանուկները պիտի ըլլան մեր հայրենիքին ու ժողովուրդին ապագայի կերտիչները, մեր կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ աշխատանքի կոչուողները, հետեւաբար, անոնց առողջ ու հայեցի դաստիարակութիւնը ազնիւ պարտականութիւն մըն է երեցներուն: Վեհափառ Հայրապետը եզրափակեց յանձնարարելով, որ մեր Թեմին մէջ ու ամէն տեղ, անհրաժեշտ հոգածութեամբ հետապնդուին մեր դեռատի սերունդներուն բարոյական ու ազգային դաստիարակութեան աշխատանքները:

## **ԳԵՂԱՐՈՒԵՏՍԱԿԱՆ ԲԱԺԻՆ**

Ճաշի պահուն ու անկէ ետք, կիրարկուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր մը: «Տօնական» նուագախումբը հայկական երաժշտութեամբ ստեղծեց ջերմ մթնոլորտ, արժանանալով ներկաներուն ծափողջոյններուն: Արուեստագետներ Անահիտ Ներսիսեան եւ Ռազմիկ Մանսուրեան, դաշնակի ընկերակցութեամբ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի, հրամցուցին ժողովրդային ու դասական երգերու փունջ մը, նմանապէս գնահատանքի արժանանալով վայելող ներկաներուն կողմէ: Համագգայինի »Անի« պարային միաւորը, պարուսոյցներ Եղիա Հաշօլեանի ու Սիւզի Դարինեան-Բարսեղեանի հոգածութեամբ, շարժումի արուեստի պաստառներ ներկայացուց, խանդավառելով տօնակատարողները:

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔՆ ՈՒ ՊԱՏԳԱՄԸ**

Առաջնորդ Սրբազանը արտասանեց երեկոյի եզրափակման իր օրհնութեան խօսքն ու Ս. Ծննդեան տօնի պատգամը: Ողջունելէ ետք բոլոր պաշտօնական հիւրը, բարերարներն ու ներկաները, Առաջնորդ Սրբազանը հանգամանօրէն խօսեցաւ Աստուածորդւոյն Ս. Ծնունդով մարդկութեան ուղղուած շնորհքներուն ու պատգամներուն՝ մարդկութեան ուղղուած հաւատքի, յոյսի ու սիրոյ պատգամներուն մասին: Ան յիշեցուց, որ Աստուածորդւոյն աշխարհ առաքելութիւնը Երկնաւոր Հօր գերագոյն սիրոյ

արտայայտութիւնն էր մարդուն հանդէպ, իսկ Մանուկ Յիսուս եկաւ բարեշրջելու եւ ամրապնդելու Արարիչին ու մարդուն միջեւ յարաբերութիւնները: Առաջնորդ Սրբազանը անդրադաձաւ Վեհափառ Հայրապետի պատգամին ու 2011 տարին Հայ Մանուկի Տարի հռչակելու անոր որոշումին: Ան այս առիթով շնորհակալութեան յատուկ խօսք ուղղեց երեկոյի գլխաւոր հովանաւոր Տէր եւ Տիկին Օսկօ եւ Երան Կիրակոսեան բարերար ամուլին եւ Ազգ. Առաջնորդարանի բոլոր բարերարներուն, ապա նաեւ հակիրճ կերպով անդրադարձաւ անցեալ տարուան ընթացքին տեղի ունեցած իրագործումներուն ու յառաջիկայի մարտահրաւերներուն: (Առաջնորդ Սրբազանին խօսքը տեսնել առանձին):

Երեկոն իր աւարտին հասաւ Առաջնորդ Սրբազանին Պահպանիչով: Հոգեւորականաց դասու առաջնորդութեամբ, ներկաները երգեցին «Կիլիկիա»ն ու Հայրապետական Մաղթանքը, ապա մտերմիկ գրոյցներով ու բարեմաղթութեանց փոխանակումով հրաժեշտ տուին իրարմէ:

## **GREAT SHOW OF SUPPORT AT THE PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS DINNER**

On Thursday, January 6<sup>th</sup>, 2011, over 650 Prelacy supporters gathered at "Bagramian" Hall of Holy Cross Cathedral in Montebello for the Prelate's traditional New Year and Christmas Dinner. The dinner is held annually under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, by the initiative of the Religious and Executive Councils, and organized by the Prelacy Ladies Auxiliary.

Among the guests in attendance were Consul General of Armenia the Honorable Grigor Hovhannissian, Central Executive member Mr. Vahe Yacoubian, ARF Bureau member Dr. Viken Hovsepian, ARF Central Committee Chair Mr. Avedik Izmirlian and members, Executive Council, Homenetmen, ARS, and Hamazkayin members, Los Angeles City Councilman the Honorable Paul Krekorian, parishes' delegates and Boards of Trustees, Board of Regents and Prelacy Schools' principals and directors, media representatives, sponsors, and friends.

The dinner was hosted by Mr. and Mrs. Osko and Yeran Karaghossian. The evening's Master of Ceremonies was Very Rev. Fr. Barthev Gulumian.

The evening began with the entrance of the Prelate and clergy into the hall in a procession, candles in hand and collectively singing Christmas hymns. H.E. Archbishop Yeprem Tabakian read a passage from the Bible on the Birth of Christ, after which the Prelate blessed the evening's mementos which were donate by Mr. and Mrs. Harout Jabarian.

Welcoming remarks were delivered by Ladies Auxiliary Vice-Chair Mrs. Dzovig Zetlian, followed by remarks by Executive Council Chair Mrs. Rima Boghossian, both of whom reflected on the proclamation by H.H. Catholicos Aram I designating 2011 the "Year of the Armenian Child" and stressing the

need to give special attention to our youth who are the future of our church and nation.

Consul General Grigor Hovhannissian was also invited to deliver his remarks, in which he conveyed his wishes for a blessed new year.

Guests then watched the taped message of H.H. Catholicos Aram I. His Holiness first commended the Prelate, Councils, and collaborators for the success realization of the previous year's endeavors, and wished that the new year bring even greater achievements and successes. Speaking on the "Year of the Armenian Child", His Holiness emphasized the obligation we have towards our children, in ensuring that they receive the proper instruction and education to take the helm as our future leaders.

The evening also included a cultural program. Throughout the night, guests enjoyed traditional Armenian music presented by the "Donagan" band, performances by singers Anahit Nercisyan and Razmig Mansourian, and by the Hamazkayin "Ani" Dance Group led by directors Yeghia Hasholian and Suzy Barseghian-Tarpinian.

The Prelate was then invited to deliver his message.

His Eminence first and foremost gave thanks to God for granting a new year and the opportunity to gather again as members of one family to celebrate the Glorious Birth and Theophany of our Lord Jesus Christ. He spoke of the Birth of Christ as the manifestation of God's boundless love towards mankind, and how God became man bringing to us the messages of faith, hope, love, and peace. He greeted the guests and expressed his wish that these Christmas tidings remain the guiding light of our lives and lead us to new horizons.

The Prelate then expressed his thanks and appreciation to H.H. Catholicos Aram I for his paternal wisdom and guidance. Speaking on the proclamation of His Holiness of the "Year of the Armenian Child", he emphasized the importance of instilling our faith and virtues in our youth and guiding them on the right path.

He thanked the evening's hosts Mr. and Mrs. Osko and Yeran Karaghossian for their unwavering support, and to the Carolan Foundation and Lincy Foundation for their devoted support. Noting that it is owing to the moral and financial of sponsors that the Prelacy's endeavors are successfully realized, the Prelate announced that this year donations totaling \$500,000 were made to the Christmas Fund.

The Prelate then brought to the attention of the guests a few of the accomplishment of the past year, including the paying off of the Prelacy mortgage. He spoke of the progress of the Las Vegas parish community, which is in the process of constructing St. Garabed Church, and announced that the church benefactor Mr. Larry Barnes has just recently made another donation, this time in the amount of \$250,000 towards the construction project.

The Prelate also announced that at the start of the school year he conducted the official opening of the Holy Martyrs Mary Cabayan Elementary School, and once again thanked Dr. and Mrs. Vatche and Shoushig Cabayan for their donation in memory of their mother Mary Cabayan.

The Prelate concluded, "and now, we look forward to a new year with the hope of new successes and new accomplishments. There is much to be done year, but be assured that all will be done when we work together with faith, hope, love, perseverance, and commitment. Inspired and motivated by the achievements of the past, let us endeavor on a new year with renewed drive and vigor, and in everything giving thanks to Almighty God for His divine wisdom and guidance. On this joyous occasion, let us join together once again and proclaim the news of the Glorious Birth of our Savior saying, 'Glory to God in the highest, and on earth peace, goodwill toward man'. May 2011 be a blessed year for us all, for the Armenian Church, and the Armenian nation".

The evening came to a close with the Prelate's benediction, and the singing of the Cilician and Pontifical anthems.